Հինգ քայլ, որ Դուք կարող եք կատարել, ծրագրում ընդգրկվելուն նախապատրաստվելու համար

1. Այցելե՛ք HeathCare.gov կայք

Տեղեկացե՛ք Առողջության ապահովագրության շուկայի, այդ թվում՝ Medicaid ծրագրի և Երեխաների առողջության ապահովագրության ծրագրի (CHIP) մասին:

2. Հարցրե՛ք Ձեր գործատուին, թե արդյոք նա առաջարկում է առողջության ապահովագրություն:

Եթե Ձեր գործատուն չի առաջարկում առողջության ապահովագրություն, ապա Դուք կարող եք ապահովագրական ծածկույթ ձեռք բերել Ապահովագրական շուկայից կամ այլ աղբյուրներից:

3. Կազմե՛ք Ձեզ հետաքրքրող հարցերի ցանկը <u>նախքան</u> Առողջության ապահովագրության Ձեր պլանի ընտրության պահը:

Օրինակ՝ «Կարո՞ղ եմ շարունակել օգտվել իմ ներկայիս բժշկի ծառայություններից» կամ «Այս ապահովագրական պլանը կհատուցի՞ իմ առողջության հետ կապված ծախսերը ճամփորդելիս»:

4. Հավաքե՛ք Ձեր ընտանիքի եկամտի վերաբերյալ հիմնական տեղեկությունները:

Ձեզնից կպահանջվի եկամտի վերաբերյալ այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք կարող եք գտնել W-2 ձևում, հաշվարկավճարային տեղեկագրերում կամ հարկային հայտարարագրում:

5. Նախանշե՛ք Ձեր բյուջեն:

Առկա են առողջության ապահովագրության տարատեսակ պլաններ, որոնք կարող են բավարարել տարբեր կարիքներ ու ֆինանսական հնարավորություններ ունեցող անձանց պահանջները: Դուք պետք է դիտարկեք, թե որքան եք կարող ծախսել յուրաքանչյուր ամիս ապահովագրավճարների վրա և որքան եք ցանկանում վճարել Ձեր գրպանից դեղատոմսերի կամ բժշկական ծառայությունների համար:

Դուք իրավունք ունեք Շուկայի վերաբերյալ տեղեկություններ ստանալ Ձեզ համար ընդունելի ձևաչափով, ինչպիսին է՝ մեծ տպագրությունը, Բրայլը կամ աուդիոն: Դուք ունեք նաև բողոք ներկայացնելու իրավունք, եթե կարծում եք, որ Ձեր հանդեպ խտրականություն է դրսևորվել: Առավել մանրամասն տեղեկությունների համար այցելե՛ք CMS.gov/about-cms/agency-information/aboutwebsite/cmsnondiscriminationnotice.html, կամ զանգահարեք Ապահովագրական շուկայի տեղեկատու կենտրոն՝ 1-800-318-2596 հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-855-889-4325 հեռախոսահամարով:

Վճարված է Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից:

Health Insurance Marketplace CMS Product No. 11629-Arm
Revised July 2019

Առողջության ապահովագրության շուկա

Առողջության ապահովագրության տարբերակները

Առողջության ապահովագրության շուկայի միջոցով Դուք կարող եք գտնել Ձեր բյուջեին համապատասխան և Ձեր կարիքները բավարարող առողջության ապահովագրական ծածկույթ: Ապահովագրական ծածկույթի համար դիմելիս Դուք կարող եք տեսնել Ձեզ առաջարկվող բոլոր տարբերակները և ընդգրկվել ծրագրում: Դուք կարող եք դիմել մասնավոր ապահովագրության, Medicaid կամ Երեխաների առողջության ապահովագրության ծրագրի (CHIP) համար:

Ապահովագրական շուկայում առկա յուրաքանչյուր ապահովագրական պլան առաջարկում է հիմնական առողջապահական արտոնությունների նույն կազմը, այդ թվում՝ բժշկին այցելություններ, կանխարգելիչ խնամք, հիվանդանոցային բուժում, դեղատոմսեր և այլն: Նախքան ընտրություն կատարելը Դուք կարող եք համեմատել ապահովագրական պլանները՝ ըստ գնի, արտոնությունների, որակի և Ձեզ համար էական համարվող այլ հատկանիշների:

Մասնավոր ընկերությունների կողմից առաջարկվող ապահովագրական պլանները

Ապահովագրական շուկայի միջոցով առաջարկվող ապահովագրական պլանների սպասարկումն իրականացվում է մասնավոր ընկերությունների կողմից: Դուք հնարավորություն ունեք համեմատելու Ապահովագրական շուկայում առաջարկվող առողջության ապահովագրական ծածկույթի Ձեր տարբերակները և, նախքան ծրագրում ընդգրկվելու որոշում կայացնելը, պարզելու Ձեր ապահովագրավճարի չափը, չհատուցվող գումարները և Ձեր գրպանից կատարվելիք ծախսերը:

Դուք և Ձեր ընտանիքը պաշտպանված եք: Ապահովագրական պլանները չեն կարող մերժել Ձեզ ապահովագրական ծածկույթի տրամադրումը այնպիսի արդեն գոյություն ունեցող կամ քրոնիկ հիվանդագին վիճակների պատճառով, ինչպիսիք եք՝ քաղցկեղը կամ շաքարախտը, բացի դրանից, նրանք չեն կարող տարբեր ապահովագրավճարներ գանձել կանանցից և տղամարդկանցից:

Օգտվեք ծախսերը նվազեցնելու հնարավորությունից

Երբ Դուք օգտվում եք Ապահովագրական շուկայից, Դուք կարող եք ստանալ հարկային կրեդիտ ամսական ապահովագրավճարի ծախսերը և Ձեր գրպանից կատարվելիք ծախսերը նվազեցնելու համար: Երբ դիմեք, կպարզեք, թե որքան գումար կարող եք խնայել: Դիմողների մեծ մասը կստանա որոշակի չափով խնայողության հնարավորություն:

Ուսումնասիրե՛ք Ապահովագրական շուկան:

Այցելե՛ք Healthcare.gov կայք Ձեր հարցերի պատասխանները ստանալու համար և բաժանորդագրվե՛ք Ապահովագրական շուկայի վերաբերյալ էլեկտրոնային փոստով թարմ տեղեկություններ ստանալու համար: Դուք նաև կարող եք զանգահարել Առողջության ապահովագրության շուկայի տեղեկատու կենտրոն 1-800-318-2596 հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-855-889-4325 հեռախոսահամարով:

Երբ մեկնարկի ծրագրում ընդգրկվելու ազատ ժամանակաշրջանը, Դուք կարող եք մուտք գործել Ապահովագրական շուկա և դիմել առողջության ապահովագրական ծածկույթի համար, համեմատել Ձեզ առաջարկվող բոլոր տարբերակները և ընդգրկվել ապահովագրական պլանում:

Եթե Դուք իրավասու եք օգտվելու Ծրագրում ընդգրկվելու հատուկ ժամանակաշրջանից Ձեր կյանքում տեղի ունեցած փոփոխության՝ ամուսնության, երեխա ունենալու, այլ ապահովագրական ծածկույթ կորցնելու կամ բնակության վայրի փոփոխության հետևանքով, ապա Դուք կարող եք դիմել ապահովագրական ծածկույթ ձեռք բերելու համար նաև Ծրագրում ընդգրկվելու ազատ ժամանակաշրջանից հետո: Օգտագործելով նույն դիմումը՝ Դուք նաև կարող եք տարվա ընթացքում ցանկացած ժամանակ դիմել Medicaid և CHIP ծրագրերի համար: